# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/120 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **22 հոկտեմբերի 2025թ.**

2025թ հոկտեմբերի 21-ից 22-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի կիսախողովակների տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/120 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Մովսիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, |
| Լ. Մուրադյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Տ. Իզրյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ, |
| Դ. Հովհակիմյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ, |
| Ա. Մխիթարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Մովսիսյան: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով թիվ 1 Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտերի մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի հոկտեմբերի 22-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 16:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գինը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի 1-ին փողոցում ոռոգման նպատակով միակողմանի ե/բ ЛР-60 տիպի կիսախողովակների տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ | 200000 |

Ընթացակարգի հայտերի բացումը նախատեսված էր www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի հոկտեմբերի 21-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:
Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ-ի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Մուրադյան ____________

Տ. Իզրյան ____________

Դ. Հովհակիմյան ____________

Ա. Մխիթարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________